


# ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

ՊԱՆՏՕՒԱԹԵՐԻ  
Բ.Մ.Ը.Մ.Ի  
ԳՆՄԵՆԱԼ 1918 Ն



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDE EN 1918

## "HAI SCOUT"

Գ. ՏՄԻ (ՆՈՐ ՇՐՋԱՆ) ԹԻՒ 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 1929

### ԱՌԱՆՑ ՎԵՐԱՊԱՅՈՒԹԵԱՆ

Նախասարգեան Հանդէսը, որ տօնուեցաւ Փարիզի մէջ, Հ. Մ. Ը. Մ.Ի Տասնամեակին ի պատիւ, տեղի ունեցաւ համազգային համակրանքի մը մէջ:

Այդ տօնը փաստ մըն էր որ, այս Միութիւնը, տակաւին կը պահէ իր մէջ այն իտէալը որ ապրեցուց տասնեակ տարիներէ ի վեր, Պոլսէն սկսած՝ աշխարհի բոլոր հայ գաղութներու մէջ:

Տարբեր ո եւ է ազգ, մանաւանդ մեզի պէս ահաւոր վտանգներէ անցած եւ ցեղապահպանութի մղձաւանջը ուսին՝ պիտի գուրգուրար եւ իր բոլոր ուժովը պիտի պատնիշէր այս տեսակ կազմակերպութիւն մը:

Ափ մը անճնուէր երիտասարդներ, զգացին ժամանակին ցեղին պահանջը, ոտքի հանեցին պատանին ու երիտասարդը, կազմեցին ու կազմակերպեցին ԳՈՐԾ մը եւ նուիրեցին զայն Ազգին, իբր կարեւոր սպեղանի մը անոր վէրքերուն:

Ընդարձակեցաւ շարժումը եւ տուաւ՝ գեղեցիկ արդիւնքներ, հիացնելով նոյն իսկ օտարները:

Տարիներ անցեր են ահա, եւ նոյն այդ դէմքերն են տակաւին գործի վրայ, կ'ուզեն փոխանցել զայն նոր սերունդին, կամ կը փնտռեն աջակիցներ, դուրս կը կանչեն աշխատելու կամք ու կորով ունեցողները, պէտք կայ անոնց տասնով, քսանով, հարիւրով:

Գործը ծաւալ ունի եւ խորութիւն, պէտք կայ օժանդակներու, մասնագէտ կամ ոչ, պէտք կայ ազգին բոլոր հատուածներուն՝ ԱՌԱՆՑ ԽՏՐՈՒԹԵԱՆ:

Ժամանակ, աշխատանք, նիւթական պահանջող գործ է այս:

Միթէ՞ դիւրին է հարիւրներով պատանիներ հաւաքել դռնէ դուռ, մարգել հագուեցնել. դաշտէ դաշտ, քաղաքէ քաղաք տանիլ զանոնք, հօկել անոնց վրայ, հսկել անոնց առողջութեան եւ նկարագրին վրայ, մըցիլ օտարներու հետ՝ վեր բռնելով ազգային պատիւը. թող չափեն, քանի մը զաւակ ունեցող ընտանիքներ, իրենց իսկ կեանքէն: Սրճարանի մը անկիւնը խորհրդակցելով, շաբաթէ շաբաթ ժողով



մը գումարելով եւ հրահանգներ զրկելով չի վերջանար այն, պէտք է վազել հրահանգ-  
ներուն ետեւէն՝ գործադրելու եւ գործադրել տալու համար զանոնք: Որքան դժուա-  
րութիւն երբ մանաւանդ՝ գործը պատանիներու հետ է . . . :

Ուրիշ ազգերու մէջ, պետութիւնները կամ հարուստ կազմակերպութիւններն են  
որ կ'ստանձնեն այս տեսակ ծանր ու պատասխանատու գործերը, իսկ մեր մէջ մատի  
համրանքով երիտասարդներն են որ կը տանին զայն՝ յաղթահարելով անիրաւ քննա-  
դատութիւններու եւ յարձակումներու, մէկ կողմ ձգած իրենց առօրեայ մտահոգու-  
թիւններն ու ցաւերը, պաշտպանելու եւ տեւականացնելու համար սա գեղեցիկ եւ նե-  
րուժ շարժումը որ, Հ. Մ. Ը. Մ. կը կոչուի:

Կ'ըսեն մեզի, «քալեցէ՛ք, շարունակեցէ՛ք, կազմակերպեցէ՛ք եւ երբ տեսնենք ու  
հաւնինք, ձեզի հետ ենք բոլորս ալ...»

Գեղեցիկ տրամաբանութիւն, սակայն շա՛տ անգութ՝ երբ լաւ մտածենք,  
Օսարի մայնութիւն՝ օսարի դեմ...:

Ո՛վ ենք մենք, եւ ո՛վ էք դուք, բարեկամնե՛ր. մի՛թէ՞ մ'երնէ գործը, մի՛թէ՞ խա-  
նութպանութիւն կ'ընենք մենք—անհատական գործ:

Եթէ հայ էք իսկապէս, եթէ կը մտահոգուիք ճակատագրովը սա շուարած եւ ա-  
մէն կողմէ անիրաւուած ցեղին՝ ինչպէ՞ս կը թոյլատէր ձեզի հանդիսատեսի դիրքը:

Մինչեւ ե՛րբ պիտի շփոթենք ԳՈՒԾԸ անձերու հետ:

Այսօր կան անհատները վաղը չկան, իսկ գործը՝ տեւական է ու զօրանալու կարօտ:

Եթէ օգտակար է, կարեւոր է ան, ուրեմն խմբուեցէք անոր շուրջ, անկեղծօրէն  
եւ անշահախնդիր կերպով աջակցեցէք անոր:

Համազգային դպրոց մըն է Հ. Մ. Ը. Մ.ը: Ձեր եւ բոլորին զաւակներուն նկարա-  
գիրը եւ ապագան է դրուած նժարին մէջ, պատասխանատու էք եթէ թեթեւօրէն վե-  
րաբերիք, եթէ միայն օտար հանդիսատեսի դիրք բռնէք անոր հանդէպ:


Հ. Մ. Ը. Մ.ը կը հնչեցնէ փողը, կը բարձրացնէ դրօշը, հայութեան կը մնայ  
լսել զայն եւ պատասխանել անոր առանց վերապահութեան:

Ահա մեր խօսքը բոլորին:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ







**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵՐ ՄԷՋ**

Աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկիրներում մէջ օր ըստ օրէ, պահանջ մը դարձած է սկաուտական շարժումը:

Սոյն շարժումը մեր մէջ, հսկառակ տասնեակ մը տարիներէ ի վեր սկսուած ըլլալուն, դժբախտաբար հայ ժողովուրդին մեծագոյն մասը՝ որոշ գաղափար չունի դեռ սկաուտական շարժումի նպատակի մասին: Շատեր զայն կը շփոթեն՝ զինուորութեան հետ, որիչներ հաճոյքի, խաղի եւ զուարճութեան հետ:

Իրաւ է թէ քաղաքական անցուդարձերը յաճախ պատճառ եղած են, քանիցս սկսուած սկաուտական շարժումը տկար թողուլ:

Ո՛չ ոք կրնայ սուրանալ Հ. Մ. Ը. Մ. ի կատարած դերը Եւրոպայի պատերազմէն անմիջապէս յետոյ:

Պատերազմի սարսափներէն ճողոպրած հայ գաղթականութեան արգահատելի վիճակին մէջ Պոլիս խուժած միջոցին, հայ սկաուտներն էին առաջին անգամ Պոլսոյ մէջ, երբ դեռ Հայ կարմիր թաշտ գոյութիւն չունէր, հիւանդ ու անկար գաղթականներուն դեղ ու դարման հայթայթողը: Անկէ յետոյ հետզհետէ հիմնուած որբանոցներու ֆեզիքական հոգն ու սկաուտական դաստիարակութիւնը կրկին Հ. Մ. Ը. Մ. էր որ կը ստանձնէր:

Հ. Մ. Ը. Մ. ի պատմութիւնը չէ որ պիտի բնեմ հոս, այլ անոր կատարած դերը, մանաւանդ սկաուտական շարժումի տարածումը մեր մէջ եւ բոլոր այն պատանիները որոնք ապրեցան Հ. Մ. Ը. Մ. ի ոգեւոր շրջանին՝ սկաուտական շարժերու մէջ, այսօր ամէն տեղ անոնք են որ չունչ կուտան այս կազմակերպութեան:

Հ. Մ. Ը. Մ. ք ներկայիս ունի Փարիզի մէջ 150ի մօտ սկաուտներ:

Սակայն վերոյիշեալ թիւը համապատասխան չէ փարիզահայ գաղութին համար: Ուրեմն մեր ժողովուրդը պէտք է որ լայն ծաւալով ուժ տայ սկաուտական շարժումին: Պէտք է դիտել տանք որ ծնողքները անտարբեր են անոր հանդէպ նախ նվաճական պայմաններու բերումով եւ յետոյ գաղափար չունենալով սկաուտական շարժումի մասին:

Պզտիկ ակնարկ մը, սկաուտական դաւանանքի եւ անոր կիրառումին վերայ կրնայ գաղափար մը կազմել տալ եւ պի-



Ֆօթօ ԱՐԱՔՍ

Մեր Բանակումն

տի տեսնուի որ՝ ծագումով անգլիական այս շարժումը անհրաժեշտ պահանջ մըն է մեր այս օրուան ներկայ սերունդին համար, որ հետզհետէ օտարանալու դատապարտուած է:

Սկաուտական դաստիարակութիւնը ամէն բանէ առաջ՝ կուտայ տղուն ազգային ոգի, երբայրասիրութիւն՝ (որ մեր մէջ դժբախտաբար բոլորովին հակառակն է), հնազանդութեան ոգի, իրերօգնութիւն, մանաւանդ այս վերջին պարագան — երէցներու հոգածու վերաբերմունքը պզտիկներու հանդէպ — ինք-



նին արդէն կ'ապացուցանեն թէ ինչպիսի՜ տաք մթնոլորտ մըն է սկառուտական շրջապատը:

Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտական յանձնախումբի կազմակերպած վերջին մէկ ամսուան բանակումի տեւողութեան՝ ուր Հայ Կարմիր Ուսուցիչի եւ «Բուժանք» թերթի սաներն ալ կային, տեսանք որ տղաքը որքան՝ օգտուեցան առողջական եւ բարոյական տեսակէտով: Պատա-




Մեր բանակումէն  
Յօժօ ԱՐԱՐՍ

նինք, որոնք իրենց տանը մէջ ունեցած կարգ մը թերութիւնները՝ օրինակ կերակուր չսիրել, չուտել, անմաքրութիւն եւ այլն, շատ կարճ ժամանակի մը մէջ անոնք հարկադրուեցան մոռնալ իրենց այդ թերութիւնները:

Ուրեմն սկառուտական բանակումներու մէջ որ սկառուտական շարժումի ամենակարեւոր ազդակներէն մէկն է, կարելի է պատանին ուղղել ամէն կերպով, անոր մէջ արթնցնելով ձեռներէցութեան, մաքրութեան, կոկիկութեան ոգին, մէկ խօսքով պատանին այդ փոքր տարիքին մէջ ինքնապահ դարձնել:

Կարելի չէ՛ սա մի քանի տողերով տալ սկառուտութեան օգուտները: Հայ Սկառուտը պիտի անդրադառնայ լայնօրէն անոր վրայ, զայն պահանջք մը դարձնելու յոյսով՝ հայ կեանքի մէջ:

Սկառուտ-խմբագետ  
Հ. ԱԲԷԿԵԱՆ



Ի՞նչ ՊԵՏԲ է ԸՆԵՆ ԶՄԵՌՈՒՄ

Արշաւներու եղանակը անցաւ այլեւս, խմբագետները պէտք է խորհին հիմայ սկառուտներու ձեռնային աշխատանքի մասին: Զեռնային ժամանակացոյցը պատրաստելու ատեն, խմբագետը կամ առաջնորդը մէկ նպատակէ պէտք է մղուի, զօրացնել ձեռներէցութեան ոգին տղոց մէջ:

Ատոր համար իւրաքանչիւրին պէտք է պատասխանատու գործեր յանձնել, թէ խմբական և թէ ամենուէն զատ զատ, որպէսզի յետոյ կարելի ըլլայ արդիւնքը բաղդատելով առաւելութիւնները և թերութիւնները հաշուի առնել:

Օրինակի համար, կարելի է բերոր սկառուտներու:

Ա. յանձնարարել յաջորդ շրջանի համար ընտրել ամառնային բանակումի վայր մը, եւ պատրաստել մանրամասն յատակագիծ մը եւ ժամանակացոյց մը բանակումի համար:

Այսպէսով կարելի է նաև օգտագործել լաւագոյն յատակագիծը յաջորդ տարուան համար:

Բ. Ուժ տալ զուտ սկառուտական հաւաքոյթներու եւ ներկայացումներու, առիթ տալով ամէն սկառուտի պատրաստել սկառուտական մենախօսութիւններ, կենդանի պատկերներ, պատկերաթատրոններ, սկառուտական բերանացի պատմուածքներ: Կարելի է նաև իւրաքանչիւր ներկայացման յայտագիրը պատրաստելու հոգը յանձնել առանձին առանձին բոլորին:



Գ. Զարկ տալու է նաեւ ձեռական աշխատութիւններու, յաճախակի կազմակերպելով փոքրիկ ցուցահանդէսներ:

Դ. Բժիշկին խորհուրդով, գործնական եւ տեսական դասեր ւաւանդել տղոց, կլիմայական փոփոխութիւններու եւ սնունդի մասին, պաշտպանելու համար ինքզինքնին եւ իրենց շուրջինները, օտար երկրի կլիմայական եւ սննդական վտանգներէն, մէկ բաւով ՅԱՐՄԱՐԵՑՈՒՄԻ ՕՐԷՆՔԸ սորվեցնել անոնց:

Ե. Սկսուածները պէտք է միշտ տեղեակ պահել միջազգային սկսուածական շարժումէ, եւ գլխաւոր անցքերը նօթագրել տալ իրենց տետրակին մէջ:

Զ. Քննել տղոց յարմարութիւնները, եւ իրենց խորհուրդ տալ ուժ տալու զանազան մասնագիտութիւնաց ինչպէս կարմիր խաչ, ճաշացուցակ պատրաստել, կերակուր եփել, շինութեանց մասնագիտութիւն, հանդէսներու կազմակերպութիւն, արշաւներ կազմակերպել եւլին:

Է. Բարոյական դասախօսութիւններ, գործնական եւ տեսական: Ազգային պատմութիւն, լեզու եւ աշխարհագրութիւն, կենսագրութիւններ հայ դէմքերու, եւ հայ գեղարուեստ:

*Այս կերպով պատրաստուած սկսուածներ, բնաւ դժուարութիւն չեն քաշեր ամուսն շըրջանին ի գործ դնելու ձմրան մէջ իրենց սորվածները:*

Ծե՛ր ԱՔԼՈՐ



ՄՕՏԱԼՈՒՑ ԱՆՁՐԵՒԻ ՆՇԱՆՆԵՐ

ԱՆՁՐԵՒ ՊԻՏԻ ԳԱՅ ԵԹԷ՛

Կատուները պոչերնին կրակին դարձուցած կը մաքրուին:

Շուները փոս կը փորեն կամ ոսկոր կը թաղեն: Էշերը կը զուան:

Աքլորները ժամանակէն կանուխ կամ ուշ կ'երգեն եւ թեւերնին կը զարնեն:

Թուռակները կը ճչեն:

Թռչունները կը թփրտացնեն եւ լորձունքով կ'օծեն իրենց թեւերը:

Ջուկերը ջուրին մակերեսին ժօտ կը լողան:

Մեղուները փեթակէն չեն հեռանար:

Պատերը խոնաւ կ'ըլլան:

ձանճերը անհանգիստ երեւոյթ մը ունին եւ գէշ կը խայթեն:

Թոյլ չուան մը կը պրկուի:

Վերքերը եւ կոշտերը կը ցաւին:

Լուսնին շուրջ լայն շրջանակ մը կը տեսնուի:

Ծաղիկները զօրաւոր կը հոտին:

Մամուռները կը կակուղան:

Ծիրանի գօտի կ'երեւի առտուն:

Չոր առուակները կը խոնաւան:

Կարմիր մագերը կը գանգրին:

Մոմերը կը ճարճատին վառուած ատեն:

Մուխերը դէպի գետին կը ցրուին:

Ծխախոտը կը խոնաւայ եւ մուխը աւելի երկար ատեն կը մնայ օդին մէջ:

Չիերը եւ կովերը իրենց վիզերը կ'երկարեն եւ օդը կը հոտոտեն:

Շաւերը փոշիին մէջ կը տապալակին:

Ծովի թռչունները ցամաք կուգան:

ձանճերը տուներու մէջ կը հաւաքուին:

Մամուկները իրենց թեւերը կը զօրացնեն:

Սունկերը առատ են:

Ծառերը մուռ գոյն մը կ'ստանան:

Գեղեցիկ օրէ մը վերջ արեւը կը պահուրտի խոշոր ամպի մը ետին:

Լուսինը կ'երեւի խոշոր եւ կարմիր:

Աստղերը կը պլպլան սովորականէն աւելի:



ՆԱՄԱԿՆԵՐ

**ՍԻՐԵԼԻ ԳՐԻԳՈՐ**

Երբ սկառուտ արձանագրուեցար, քեզի խոստացած էի գրել սկառուտական ոգիին մասին: Սկառուտական ոգի ունենալու համար, պէտք է դաւանանքը լաւ գործադրես: Խմբապետդ ու առաջնորդդ յաճախ կը խօսին քեզի սկառուտական ոգիին մասին, բայց թերեւս լուրջ կարեւորութիւն տուած չըլլաս անոր եւ ըմբռնած՝ այդ երկու բառերուն բուն իմաստը, զայն հոս քեզի բացատրել շատ երկար է բայց պիտի ջանամ: Պատմեմ պատիկ միջադէպ մը տարիներ առաջ իմ առաջնորդի կեանքէս:

Առաջնորդ էի եւ խմբակիս մէջ ունէի լաւ սկառուտներու հետ սկառուտական ոգիէն հեռու տղայ մը: Չափազանց անհնազանդ եւ խօսք մտիկ չընող սկառուտ մըն էր ան. ես իմ բոլոր միջոցներս ի գործ դրի այդ տղան ուղղելու համար: Խմբապետիս հետ երբ կը տեսակցէի այդ մասին, ինձ թելադրեց, որ սկառուտական պատուոյ ատենին առջեւ հանեմ զայն: Ուրեմն, առաջնորդական խորհուրդին հրաւիրեցի զինք: Պատուոյ ատենը կազմուեցաւ, եւ բոլոր առաջնորդներուն առջեւ պարզեցի անոր ընթացքը, պահանջեցի կարգադրութիւն մը՝ իր մասին: Խմբապետը խօսեցաւ անոր եւ մասնաւորապէս շեշտեց սկառուտական ոգիին պակասը իր մէջ, իբր պատիժ առաջարկեց ամիս մը պարզ հագուստով մասնակցիլ արշաւներուն, բոլորը համամիտ գտնուեցան: Տղուն մեկնելէն վերջ ըսի թէ, այդ պատիժը շատ քիչ է, կարելի է որ չհնազանդի տրուած որոշումին եւ հեռանայ սկառուտական շարքերէն: Կիրակի արշաւ ունէինք, երբ հաւաքավայր գացի խմբակը ներկայ էր բացի այդ սկառուտէն, չէի սպասեր իրեն, բայց զարմանքս մեծ եղաւ երբ տեսայ զինք, հանրակառքէն իջաւ ձեռքը ու տելիքի ծրար մը՝ փոխանակ սկառուտական պայուսակին, եւ քաղաքային հագուստով, ե-

կաւ եւ բարեւեց զիս: Ոչ ոքի հետ կը կատակէր եւ շատ մտազբաղ երեւոյթ մը ունէր: Իրիկունը արշաւէն վերադարձիս կանչեցի քովըս, տրուած պատիժին մասին խօսեցայ եւ ըսի որ եթէ այդ ընթացքը չունենար, այս պատիժը չպիտի կրէր, նոյնպէս զարմանքս յայտնեցի այդ որոշումին համակերպելուն: Տեսայ որ աչքերը լեցուեցան եւ առանց երեսքս նայելու ըսաւ. «այդքան գէշ սկառուտ մըն էի, որ տրուած պատիժին չհամակերպէի ու հեռանայի, ոչ, կը սիրեմ սկառուտութիւնը եւ պիտի մնամ խմբակին մէջ եւ կը խոստանամ պատուոյս վրայ, որ այսօրուրէ սկսեալ պիտի ունենամ սկառուտական ոգիին վայել ընթացք մը: Անմիջապէս ձեռքը սեղմեցի, ըսի թէ վստահ եմ իր անկեղծութեանը վրայ, խմբապետին պիտի խօսիմ որ պատիժը բաւական համարէ:

Ո՛չ, ըսաւ, պիտի կրեմ պատիժս մինչեւ վերջը, այդպէսով ցոյց տալու համար թէ սկառուտական ոգին արթնցած է մէջս եւ պիտի հնազանդիմ որ ուրիշներուն ալ օրինակ ըլլայ:

Իրապէս խոստումը յարգեց, եւ եղաւ ոչ միայն խմբակին, այլ՝ խումբին մէջ ամենալաւ սկառուտը:

Ահա քեզի պատիկ դէպք մը, սկառուտական ոգին բացատրող: Ձանա ըլլալ լաւ սկառուտ մը, որովհետեւ առանց անոր ոչինչ կ'արժէ Բ. եւ Ա. կարգերը, քանի չունիս համակերպուելու, հնազանդելու ոգին: Միշտ մտիկ ըրէ առաջնորդիդ կամ խմբապետիդ խօսքերը եւ երբ խոստում կուտաս, ամէն գնով գործադրէ զայն, եւ հնազանդէ տրուած հրահանգներուն, որը արդէն քեզ կը թելադրէ դաւանանքիդ առաջին եւ երկրորդ յօդուածները — Սկառուտին խօսքը նուիրական է. Սկառուտը հնազանդ է:

Յաջորդ անգամ քեզի պիտի գրեմ խմբակի ոգիի մասին որ շատ կարեւոր է:

Ձեռքի սեղմումով  
**ՍԵՐՈՒԿ ԷՇ**


Փարիզ





# ԲԱՆԱԿՈՒՄԻ ԱՆԿՈՂԻՆ

Փափուկ . Քիչ տեղ Բանոց



ԲԱՆԱԿՈՒՄԻ ԱՆԿՈՂԻՆ

Առանց հաշուելու ծածկոցը որ սովորաբար միասին կը տանիք բանակուծի ատեն, ձեր ծրարին մէջ կրնաք աւելցնել անկողին մը, որոնց առաջինը կարելի է շինել երկու չուանով, իսկ երկրորդը ծալուած կտաւի տուպրակով մը (պատ. 1): Ահա բարձր չի ծալըւած վիճակի մէջ (պատ. 2), յետոյ լեցուած խոտով կամ չոր տերեւներով (պատ. 3), եւ կապուած չուանով: (պատ. 4)ը մեզ ցոյց կուտայ անկողինին կմախքը 4 երկճիւղ ցիցերով (Ա.): Այս 4 ցիցերը իրար կը միացուին երկու գաւազաններով (Բ.): Միացուցէք բոլորը երկու գորաւոր լաւ պրկուած չուաններով (պատ. 5), յետոյ անցուցէք աւելի բարակ չուան մը գիկակ կերպով (պատ. 6): Վերջը, մէջտեղէն երկայնքին պրկեցէք ուրիշ չուան մը (պատ. 7): Այսպէսով անկողիննիդ պատրաստ է ու միայն կը մնայ գետեղել բարձր, եւ մտնել երկու քի ծալուած ձեր ծակոցին մէջ (պատ. 8):



Յաջորդ Միջազգային ձէմպօրին տեղի պիտի ունենայ 1933ին: Ծառ մը երկիրներ հրբաւէր կարգացած են, սակայն վերջնական տեղը պիտի որոշուի, յաջորդ միջազգային համաժողովի միջոցի: որ տեղի պիտի ունենայ 1931ին Կ.ստորիոյ Սալցպուրկ քաղաքին մէջ:

## ՈՎՍՈՒՏԱԿԱՆ ԽՍՂԵՐ

### ԱՔՂՈՐԱՄԱՐՏ

Երկու սկառւտ դէմ դիմաց կը պպգին իւրաքանչիւրը գաւազան մը անցուցած է ծուկերուն տակէն և ձեռքերն ալ երկու քովէն գաւազանին տակէն անցնելով միացուցած ծուկերուն վրայէն (Տես պատկերը):



Յետոյ աքլորի պէս իրարու վրայ կը ցատկեն ջանալով խաղաղիցը գետինը նստեցնել: Գետինը նստող սկառւտը խաղը կը կորսնցնէ և ուրիշ մը տեղը կ'անցնի:

### ԶԱՆԳԱԿԻ ԽՍՂ

Գետինը ցից մը կը տնկուի որուն կը կապուին 4 մէթր երկարութեամբ երկու չուան, այնպէս որ չուանները զիւրաւ սահին ցիցին շուրջ, փոխանակ վրան փաթտուելու: Իւրաքանչիւր չուանին ձայրէն, աչքերը թաշկինակով կապուած սկառւտ մը կը բռնէ, մին ձեռքը ունի զանգակ մը, կամ ու է ձայն հանող առարկայ մը, իսկ միւսը հանգոյց եղած թաշկինակ մը: Զանգակ բռնող սկառւտը զանգակը հնչեցնելով և չուանը պրկելով կը դառնայ ցիցին շուրջ, իսկ միւս սկառւտը զանգակին ձայնէն առաջնորդուելով և միշտ չուանը բռնած կը հալածէ իր ընկերը և եթէ հասնի կը զարնէ թաշկինակով:



### ԻՆՉՊԷՍ ՍԿԱՌԻՏ ԵՂԱՅ



ԽՆԴՐԱԳԻՐ ՄԸ

— Լօրստ Ռօպէրթ Պէտրն Բաուըլ, ճէմպօրիի առթիւ ստացաւ շատ մը զարմանալի նամակներ, սակայն անոնցմէ ամէնէն զուարճալին էր կնոջ մը նամակը, որ կը խնդրէր Պետէն իրեն ամուսին մը գտնել ճէմպօրիի մասնակցող սկաուտներու մէջէն:

Ահա նամակը.

«Կուզէի հարցնել ձեզ թէ, կա՞ր արդեօք ձեր բանակետողին մէջ միջակ տարիքով սկաուտ մը որ փափաքէր ամուսնանալ:

«Ես իմ կարգիս մաքուր եմ, գործունեայ, գիտեմ գրել, լաթ լուալ, և շատ աշխատասէր եմ: Երեսունը ինը տարու եմ և չորսուկէս տարի միեւնոյն գործին մէջ աշխատած: Կը կարծեմ ըլլալ յարմար կենակից մը, միջակ գիրքի տէր մարդու մը համար: Կուզէ՞ք հարցնել եթէ կը հաճիք, ձեր սկաուտներուն թէ արդեօք մէջերնին ամուսնանալ ուզող կա՞յ:

Եթէ անհրաժեշտ է, լուսանկարս կը զրկեմ: Բայց այդ երիտասարդը պէտք է ըլլայ պատուաւոր, գործնական և ոչ անխելք:

#### ՆՈՐԸՆԾԱՅԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Խմբապետը — Պօղոսիկ, ըսենք որ դաշտին մէջ կրակ պիտի վառես, սակայն միայն մէկ լուցկի մը ունիս, և ան ալ չար բաղգէդ մարեցաւ, ի՞նչ կ'ընես:

Պօղոսիկ.— Կը վազեմ նպարավաճառին, սուսի մը եւս կ'առնեմ խմբապետ:

Երկուքուկէս տարու էր այն ատեն, թերեւս քանի մը օր աւելի կամ պակաս, լաւ չեմ յիշեր: Օր մը հարիւրի չափ տղաք, չինական հովանոցի պէս գլխարկներ դրած, վիզերնուն կարմիր թաշկինակներ կապած, շապիկներնուն թեւերը վեր սոթած, կարճ տափառներով ձեռքերնին խոշոր փայտեր բռնած անցան մեր տան առջեւէն:

Տղաքներէն մին, որ խումբին առջեւէն կը քալէր, ձեռքը բռնած էր փայտի մը ծայրը կապուած խոշոր լաթ մը, որուն վրայ ինծի համար անհասկնալի նշաններ գրուած էին: (Վերջը սովորեցայ որ այդ լաթը դրօշ է եղեր և վրայի նշաններն ալ Հ. Մ. Ը. Մ.) խումբին առջեւէն կը քալէին նաև տասնեակ մը տղաք փողերով և թմբուկներով, որոնց աշխոյժ եղանակներուն կը հետեւէին կանոնաւոր քայլերով:

Եւ իրաւ ալ այդ եղանակը այնքան խանդավառող էր որ Պօղոսիկին հետ (Պօղոսիկը մեզի դրացի մանչուկ մըն էր որ 4 տարու ըլլալով ինձմէ աւելի կեանքի փորձառութիւն ունէր) որոշեցինք հետեւիլ քիչ մը տեղ այդ սողոց, կարելի եղածին չափ յարմարեցնելով մեր քայլերը անոնց քայլերուն: Այսպէս խումբին հետեւէն ինկանք մինչև փողոցին ծայրը, ստիպուած տասը քայլը անգամ մը քիչ մը վազելու անոնց հետեւելու համար: Որովհետեւ մեր քայլերը աւա՛ղ շատ փոքր էին, փողոցին ծայրը ստիպուեցանք կենալ, յոգնած էինք, եւ երբ խումբը մեր աչքէն կորսուեցաւ, Պօղոսիկը գոհ, իր գերակշռութիւնը ապացուցանելու և ինծի նոր բան մը սորվեցնելու առիթը գտած ըլլալուն, պաշտօնապէս յայտարարեց՝ «Արի են անոնք, սկաուտ են»: Կարծեմ մոռցայ ըսելու որ հազիւ թէ կը խօսէի, և կազմած նախադասութիւններս ալ երկու բառը չէին անցնիր, օրինակ երբ անօթի ըլլայի կ'ըսէի՝ «մամա հաց» կամ «մամա ջուր»: Որով Արի բառը նորութիւն մըն էր ինծի համար, — դրօշմուեցաւ մտքիս մէջ:

Այդ վայրկեանէն սկսեալ նոր որդ մը ըս-




կսած էր կրծեկ մեր պզտիկ սրտերը: Ինչո՞ւ մենք ալ անոնց պէս չի կարենայինք Արի ըլլալ: Ի՞նչ կը պակսէր մեզի: Գլխարկ մը, շապիկ մը, կարճ տափառ մը, և խոշոր գաւազան մը: Իսկ եթէ գեռ չէինք կրնար միւսներուն չափ խոշոր քայլեր առնել, մենք ալ կրնայինք մեզի տարեկից մանչուկներու միանալ: Այդ յոյսով մեր փոքրիկ ուղեղներուն մէջ կը դարձնէինք Արի բառը և մեր կարգին սկսուտներ ըլլալու փափաքը:

Ինչպէս ըսի, ինձի համար նոր բառ մըն էր ստիկա, որով անդադար կը կրկնէի չի մտնալու համար զայն: Եւ մինչև այսօր ալ շատ լաւ կը յիշեմ այդ օրը, ոչ թէ Արի բառը շատ կրկնած ըլլալու համար, այլ այն փառաւոր ծեծին պատճառաւ զոր կերայ մօրմէս, յանցանքի մը համար, որ ուրիշ մըն էր գործած (վերջէն սորվեցայ որ այդ ալ սկսուտի մը պարտականութիւնն է եղեր, միշտ օգնել ուրիշին, նոյն իսկ անոր տեղ ծեծ ալ ուտելով): Պատմենք հիմա այդ ծեծին պատճառը:

Մայրս դարակին մէջ տուփով շաքար պահած է եղեր և ինձ շատ անգամ պատուիրած էր որ առանց հրամանի ո և է բան չ'առնեմ այլ իրմէ խնդրեմ. (այն տան պզտիկ տղոց համար ամօթ և անքաղաքավար կը նկատուի եղեր այդ տեսակ արարք, մինչդեռ հիմա ճարպիկութիւն կը նկատեն): Ես ալ շիտակը խօսելով ձեռքս չ'էի դպցուցած այդ շաքարներուն, որոնք անհետացեր էին այդ օրը, և նոյն իսկ իմ մանուկի յտակատեսութեամբս կը գուշակէի թէ մեր քով ծառայող սպասուհի աղջիկն էր յանցաւորը: Ու պատճառներ ունէի այդպէս խորհելու, քանի որ շատ անգամներ, երբ յանցանք մը գործէր, իմ վրաս կը ձգէր, կամ այնպէս մը կ'ընէր որ ինձմէ կասկածէին:

Շատ լաւ կը յիշեմ, երբ օր մը ձեռքէն գաւաթ մը ձգելով կոտրեց, բոլոր ուժովը սկսաւ պոռալ «Ի՞նչ ըրիր Պետիկ, ինչո՞ւ կոտրեցիր, մայրիկին ի՞նչ պիտի ըսես հիմա»: Իսկ ես այն տան դեռ լեզու ելած չ'ըլլալով ընդունեցայ զրպարտութիւնը և յանդիմանութիւնը՝ առանց բողոքելու:

Շար. (1).



## Գայլիկին անկիւնը

Մ Ի Շ Տ Գ Է Պ Ի Լ Ա Ի

(Գայլիկին երգը)

Օ՞ն գայլիկներ յառաջանանք  
Մարմնով մտքով մեծնայ ցանանք  
Մերն են ժպիտ, հաճոյք անբաւ  
Միշտ դէպի լաւ, միշտ դէպի լաւ:

Մեր եղբայրներ մեզ կ'սպասեն  
Յրուած չորս կողմ հիւսիս հարաւ  
Թող մեր գուարթ երգը լսեն  
Միշտ դէպի լաւ, միշտ դէպի լաւ:

Ամէն տղայ գայլիկ էր նախ  
Շայ սկսուտ վերջէն եղաւ  
Մենք ալ երթանք աշխոյժ անվախ  
Միշտ դէպի լաւ, միշտ դէպի լաւ  
ԺՊՏՈՒՆԻ

## ԵՆԱՆԴՈՒՆ ԳՍՅԼԻԿԸ

Շինգ վայրկեան կայ դեռ շոգեկառքին, կաշարանը կ'սպասեմ: Յանկարծ մեր մասնաճիւղի գայլիկներէն մին, Զաւէնը, վազելով կուգայ ինձ մօտ: Մէկ, երկու, արդէն անշարժացած է, երկու մատները բարձրացնելով ականջին քով: Գայլիկին բարեւն է, այսօր կը բարեւեմ, «խմբապետ, կըսէ առանց ո և է յառաջարանի, ընկեր մը ունիմ որ կ'ուզէ գայլիկ արձանագրուիլ, բայց հայերէն չի գիտեր, կուզէ՞ք որ բերեմ ձեզ մօտ»: Անմիջապէս առաջարկ անդամակցութեան թուղթ մը կ'ուտամ իրեն և կ'ըսեմ որ արձանագրէ զայն և ստորագրել տուր: «Հոս է ինքը, կը պատասխանէ եթէ կ'ուզէք անգամ մը տեսէք»: Եւ իր մէկ նշանին վրայ, վառվուռն աչքերով փոքրիկ մը կը մօտենայ մեզ: Արդէն ուրախացած եմ, լաւ խմոր կը խորհիմ, և ֆրանսերէն լեզուով կը հարցնեմ



# Է Շ Ո Ւ Կ Ձ Ա Կ Ը

## Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ն Ի Ք

Ժամանակին թագաւոր մը և թագուհի մը կ'սպրէին:

Ճի՞շտ է:

Կատարելապէս ճիշտ:

Թագաւորին անունն էր Կարոլէն, չեմ գիտեր քանիերորդ, և շատ հաւանական է որ իր մէջ առաջ և վերջը ուրիշ Կարոլէն մը գոյութիւն ունեցած ըլլայ. իսկ թագուհին կը կոչուէր Կիւյօմէթ:

Ընտանեկան անհամաձայնութիւնը անպակաս էր թագաւորին և թագուհիին միջև որպէս պարզ մահկանացուներ, և ինչո՞ւ չէ, քանի որ թագաւորներն ու թագուհիներն ալ մարդեր են, անուս զիւղացիներու նման, ունին թերութիւններ և երբեմն ալ առաւելութիւններ:

Իրենց անհամաձայնութեան գլխաւոր պատճառն էր, զաւակի մը չգոյութիւնը:

Բոլոր ուրիշ թագաւորներու նման, այս թագաւորն ալ կը փափաքէր ունենալ զահաժառանգ մը՝ իր մահէն վերջ:

Մինչդեռ թագուհին հոգն անգան չէր բնէր թէ զահաժառանգ մը եղեր է կամ ոչ, այլ կը փափաքէր ազջիկ զաւակ մը ունենալ:

Եւ օր մ'ալ թագաւորը լարկացաւ, բարկութենէն կաս կարմիր եղաւ, աւելի կարմիր քան ինչ որ էր սովորական օրեր:

Խստօրէն, և բացէ ի բաց յայտարարեց թա-

թէ կուզէ՞ զայլիկ արձանագրութիւլ Հ. Մ. Ը. Մ. ի Այո՛ կը պատասխանէ, շատ կը փափաքիմ. Անունդ ի՞նչ է, կը հարցնեմ...

— Եաշէր Սալօմօն կը պատասխանէ. Զրեայ մըն է եղեր. չեմ կրնար զարմանքս յսպել և անքաղաքավար չ'ըլլալու համար կ'ըսեմ որ սպասէ մեր պատասխանին իսկ մեր ետանդուն Զաւէնին ձեռքէն թուղթը առնելով կը թելադրեմ առայժմ հրեաները անգամ չ'արձանագրել...

Ք. Փ.

գուհիին թէ՛ եթէ այդ տարւոյն մէջ ալ զաւակ չունենայ, զինքը պիտի արտաքսէր պալատէն և ուրիշ կնոջ մը հետ պիտի ամուսնանար:

Եւ թագաւոր Կարոլէն իր մտադրածը կը գործադրէր:

Կրնաք երեւակայել թագուհիին տխրութիւնը երբ իմացաւ թէ ամուսինը կ'սպառնար զինքը արտաքսել:

Հակառակ թագաւորին սպառնալիքին, օրեր կ'անցնէին, և տակաւին թագաւորը հայր չէր ըլլար, մինչ թագուհին, տրտում տխուր, շարունակ կ'արտասուէր և ամուսնոյն սպառնալիքը մտքէն չէր հեռացնէր:

Օր մըն ալ, երբ թագուհին կը պտտէր պալատին պատշգամին վրայ՝ տեսաւ վարը, ճամբուն վրայ, անձանօթ մարդ մը որ զինքը կը բարեւէր ծայր ատիճան յարգանքով և գըլխարկը ձեռքը՝ կը խոնարհէր մինչև զետին, այն ատիճան որ խոշոր փետուրը որ կը զարգարէր իր յարդէ գլխարկը՝ կը քսուէր հողին:

Թագուհին խորհեցաւ որ իրեն պատշաճ չէ պատասխանել անձանօթի մը բարեւին:

— Այդ որքա՞ն հպարտ է ձեր վեհափառութիւնը, ըսաւ անձանօթը, ծաղրածու երեւոյթով մը. «Կ'արժէր որ պատասխանէիք իմ բարեւս, թերեւս, այն օրը երբ ձեր ամուսինը արտաքսէ ձեզ պալատէն, նուազ գոսոզ ըլլաք, աւելցուց քմծիծաղով մը:

Այս խօսքերուն վրայ, թագուհին սառսրաց և նայեցաւ անձանօթին:

Պզտիկ հասակով ծերուկ մընէր, աւելի կենդանիի զէմք ունէր, քան թէ մարդու կուզ մը ունէր կուրծքին, կուզ մ'ալ կոնակը և երկու հատ ալ բուսած էին ճաղատ դանկին վրայ:

Աս որ տեսաւ, թագուհին սոսկաց, «ներեցէք ինձ պարոն, ըսաւ, չէի նշմարած ձեզի»:

— Շատ բարի, պատասխանեց անձանօթը, կ'ընդունիմ թէ ճշմարիտ է ձեր ըսածը, և հիմայ, կը հաւանիմ ձեզ ազատել ձեր մտահոգութիւններէն:

— Ի՞նչ մտահոգութիւն ըսաւ թագուհին:

— Ես, պատասխանեց, անձանօթը, կախարդ Կարափօրօգօգօն եմ, իմ կարողութիւնս



այնքան մեծ է որ կարող եմ ձեր փափաքածը  
տալ, կը կարծէք թէ չե՞մ գիտեր թէ զուակ  
մը ունենալ կը փափաքէք:

— Ա՛հ, եթէ կրնաք ինձ պարգևել զայն...  
բացազանչեց թագուհին:

— Կրնամ, բայց կախարհը, կամ կրնամ  
գոնէ միջոցը ցուցընել ձեզ:

— Շուտ բռէք, ազաչեց թագուհին:

— Կ'երթաք պալատին մրգաստանը, կը  
փնտռէք այն խնձորինին, որ ոչ մէկ տերև ու  
նի, բայց և այնպէս երեք հատ խնձոր կայ վրան,  
կը թօթուէք ծառը և կը ժողուէք խնձորները  
կը տանիք թագաւորին, և թագաւորը կը կտրէ  
ոսկի գանակով մը, ըսելով «խնձոր պզտիկ,  
տու՛ր զաւկիկ», և ձեր իւրաքանչիւրը կը կլէ  
խնձորին կուտերէն մէյ մէկ հատ, ոչ աւելի  
Այս որ ընէք, ձեր փափաքը կ'իրականանայ.  
մնացէք բարեաւ:

Եւ ձերուկը կ'անհետանայ առանց ժամա  
նակ ձգելու թագուհին որ հարցում մը ուզգէ  
իրեն:

(Շարունակելի 1)      Թարգմ. ՍՈՒՐԷՆ,



ՅՕԽՈ ԱՐԱՔՍ

Հ. Մ. Ը. Մ. Ի Սէլրանի և Անկիլնի գայլիկները

## ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ՕՐԷՆՔԸ

Գայլիկներու նշանաբանը

— Միշտ գէպի լաւ

Գայլիկներու խոստումը

Ա. կը խոստանամ ըլլալ հաւատարիմ  
Աստուծոյ, հայրենիքիս և գայլիկի  
օրէնքին:

Բ. Գործել բարիք մը յամէն օր:

Գայլիկին զաւանանքը

Ա. Գայլիկ մը միշտ մտիկ կ'ընէ ձեր  
գայլին:

Բ. Գայլիկ մը միշտ մտքուր հայերէն  
կը խօսի:

Գայլիկներու համազգեստը

ԳԼԽԱՐԿ = Կապոյտ՝ առանց եզերքի  
գտակ (պէրէ), վրան գայլի  
գլուխ մը:

ՇԱՊԻԿ = Բաց կապոյտ, աջ և ձախ  
կողմերը գրպաններ:

ՏԱԲՍՏ = Կապոյտ, ետեր գրպան մը  
և ծունկերէն վեր, կապե  
րով ուսէն կախուած:

ՓՈՂԿԱՊ = Նարնջագոյն:

ՎԵՐԱՐԿՈՒ = Կապոյտ ուխտաւորի  
(բելերին):

ԳՈՒՂՊԱՅ = Կապոյտ և վերը կանանչ  
գիծ:

Գայլիկի կարգերը:

1. Թիկնածու: Ըլլալ 7-9 տարեկան:
2. Կակուղոտիկ: Թեկնածու մը երբ 4  
հաւաքումի ներչայ կ'ըլլայ և  
կ'անցնէ հետեւեալ քննութիւնը  
կ'ըլլայ կակուղոտիկ:

Պէտք է գիտնալ՝

- Ա. Գայլիկին նշանաբանը
- Բ. Դաւանանքը, խոստումը և կա  
րենալ բացատրել զանոնք:
- Գ. Գայլիկներու պատմութիւնը:
- Դ. Գայլիկի բարեւը և նշանակու  
թիւնը:
- Ե. Ոճնոցը



- Ձ. Կարենալ գրել անուներ, մականու-  
նը և հասցէն.
- Է. Գիտնալ խորհուրդի շրջանակ կազ-  
մել:
- Ա. ԱՍՏՂԻ ԱՍՏԻՃԱՆ
- Ա. Երեք ամիս կակուզոտիկ ըլլալ
- Բ. Վեց կապերը գիտնալ (անուորդ, օ-  
ղակ, ջուլհակ, գերան, ձկնորս և  
ամփոփ):
- Գ. Շուէտական մարզանքի երկու փորձ  
և անոնց օգտակարութիւնը բա-  
ցատրել:
- Դ. Գիտնալ ձեռքի եղունքները կտրել,  
ձեռքերը մաքուր պահել, ականջ-  
ները մաքրել, քիթէն շնջել և բեր-  
նէն արտաշնջել ու բացատրել  
պատճառը:
- Ե. Իրարու վրայէ կարենալ ցատկել,  
մէկ ոտքի վրայ քալել, պզտիկ գըն-  
դակ մը տասը մէթը հեռուէն նե-  
տել և բռնել երկու ձեռքով:
- Ձ. Հայկական պատմութենէն երկու  
զրուած պատմել:
- Է. Ժամացոյց նայիլ:
- Ը. Գայլիկներու գայլերգը գիտ-  
նալ:
- Բ. ԱՍՏՂԻ ԱՍՏԻՃԱՆ
- Ա. Վեց ամսուան կակուզոտիկ ըլլալ և  
առաջին աստղը ունենալ:
- Բ. Վեց կապերէն զատ գիտնալ, սան-  
դուխ կապը, ձեռնակապը և աթոռ  
կապը:
- Գ. Շուէտական մարզանքի 5 փորձ  
գիտնալ և բացատրել անոնց օգ-  
տակարութիւնը:
- Դ. Կողմացոյցին ութը կողմերը ճանչ-  
նալ:
- Ե. Ձեռական աշխատութիւն մը ներ-  
կայացնել, իր կողմէ շինուած:
- Ձ. Երկու լուցկիով կրակ վառել, կօ-  
շիկ ներկել, հագուստը խոզանակել  
և ծալլել:
- Է. Ըսուած նախագասութիւն մը կրկ-  
նել նոյնութեամբ: 300 մէթը հե-  
ռու գտնուող մէկու մը վագելով քո-

- վը երթալ:
- Ը. Աջ և ձախ ձեռքերով պզտիկ գրն-  
դակ մը նետել և բռնել:
- Թ. Կարենալ վէրք մը մաքրել և կա-  
պել:
- Ժ. Նոր գայլիկ մը դտնել:
- ԱՍՏԻՃԱՆՆԵՐ
- Փոխ վեցեակի պետ. = Ձախ պըրթէլին  
վրայ հորիզոնական մէկ ձերմակ ե-  
րիզ:
- Վեցեակի պետ. = Ձախ պըրթէլին վը-  
րայ հորիզոնական երկու ձերմակ երիզ:
- Փոխ Աքէլլա
- Աքէլլա
- Աւաք Աքէլլա
- Շրջանի Աքէլլա

ԾՆԹ. Ոհմակ մը կը բաղկանայ վեցեակներէ.  
(5 գայլիկ, 1 փ. վեցեակի պետ և 1 վեցեակի  
պետ): Վեցեակները կը զանազանութիւն գոյներով  
որ կը կրեն վեցեակի բոլոր գայլիկները ձախ  
ուսին վրայ եռանկիւն կտոր մը սուր կողմը  
վար դարձած:

Ա. Ասղը կը դրուի գլխարկին վրայ եւ նը-  
շանակին աջ կողմը, ներմակ գոյնով:  
Բ. Ասղը կը դրուի գլխարկին վրայ եւ նը-  
շանակին ձախ կողմը:

ՍԵՐՈՒՆԳԸ ՈՐ Կ՛ԵՐԹԱՅ  
ԵՒ ՍԵՐՈՒՆԳԸ ՈՐ ԿՈՒԳԱՅ



Մեծ Գայլը եւ Գայլիկը  
(Հայր եւ Որդի ԺՊՑՈՒՆԻ)



# ՊԱՏԿԵՐՆԵՐ ԲԱՆԱԿՈՒՄԷՆ

— Յննի՛կ (9 տարու) ի՛նչ է սա դաշտին մէջտեղ կախուած. գունաւոր կերպասը:

— Տղաքօ է, պաղոն:

— Ի՛նչ է տղ սքոն, չեմ հասկնար:

— Պաղո՛ն, տղաքօն... բան...

(*Կ'երթայ հարցնել իր ընկերներուն և կուգայ*)

— դպօշակ է պաղոն...

\* \*

— Խմբապետ, այս նամակը հայրիկին կը դրկե՞ս.

— Ի՛նչ գրեցիր տեսնամ, Արմենակ:

— Ահա պարոն, կարդացէք.

*«Մօն շէր փափաւ ժը սիւ պիէն էօրէօ տը վու էքրիր...»*

— Տղաս, ինչո՞ւ հայերէն չես գրեր:

— Պարոն, շուտ չեմ կրնար գրել, նոր սորված եմ տակաւին...

— Շոգ չէ, քիչ մը ուշ գրէ սակայն հայերէն գրէ:

— Լաւ, պարոն

*Կ'երթայ ծառի մը տակ ու ատեն մը կ'աշխատի հայերէն նամակ գրելու.*

— Ահա պարոն, գրեցի.

*«Սիրելի հայրիկ*

*«Ես հոս չաթ հանքիօթ էմ, ամէն օր մարգանգ կը ընեմ, պէն կը ընեմ, խմբապետը չաթ քօնթան է իմէ...»*

— Ապրիս տղաս, ուշագրուծիւն ըրէ որ աւելի լաւ գրես, սխալներ ունիս, հոգ չէ:

— Այ: պարոն, լաւ կը գրեմ, ասիկա շուտ գրեցի լաւ չեղաւ...

\* \*

— Արշակ (12 տարու) ելիր արտասանութիւն մը ըրէ տեսնենք:

— Պաղոն, ֆրանսերէ՞ն ըսեմ:

— Ա՛յ տղաս, հայերէն:

— «Բաղձղացի՛ղ Բաղձղացու՛ղ:

Քեզի ստղուկ ըսին ով հայ ցեղ

Դու չաղչաղուած ցեղի զաւակ

Դաղե՛ղ, դաղեղ տանջուեցաղ...»

Պրաւօ՛ Արշակ, չե՞ս կրնար բարձրացիր բարձրացուր ըսել, աշխատէ տեսնենք:

— Բաղձղա՛ցի՛ղ

— Այ, չեղաւ ր, ր, ըսէ տեսնեմ

— Ղ, ղ,...

\* \*

— Որ տեղացի ես Արմա՛ն (9 տարու)

— Հայաստանցի պարո՛ն

— Ու՛ր ծնած ես:


— Իգմի՛ր՛, Հայաստա՛ն պարոն.

— Իգմի՛րը Հայաստա՛ն է տղաս

— Այո պարո՛ն Հայաստան է, մենք հոն էինք...


— Դուն հայերէն կարդալ գիտե՞ս:

— Այո պարոն, ամէն առաւօտ խմբապետը դաս կուտայ սա թուակ նուաղին վրայ... սեւ մովաթին):



Պուրկազի (Պուլկարիա) գայիկները արշաւի միջոցին





### ՊՈՒԼԿԱՐԻԱ

#### Հ. Մ. Ը. Մ.Ը ՊՈՒԼԿԱՐԻԱՅԻ ՄԷՋ

Հաճոյքով ստացանք Հ. Մ. Ը. Մ.ի պաշտօնաթերթ Հայ Սկաուտըր Կ'ողջունենք անոր վերերեւումը եւ կը մաղթենք կատարեալ յաջողութիւն:

Հ. Մ. Ը. Մ.իութիւնը Պուրկազի մէջ հիմնուած է 1924ին: Իյդ թուականէն՝ Հ. Մ. Ը. Մ.ի տեղւոյս Մասնաճիւղը, տակաւ առ տակաւ յառաջդիմած է, քանակով ու որակով բարձրանալով՝ ներկայի լաւագոյն դիրքին:

Ներկայիս իր մէջ կը հաշուէ աւելի քան 120 անդամներ ու քաղաքիս մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ:

Սկաուտական բաժինը կը բաղկանայ 20 սկաուտներէ եւ աւելի քան 35 գայլիկներէ, գրեթէ բոլորն ալ համազգեստով:

Կան նաեւ տարիքոտ օժանդակ անդամներ: Հ. Մ. Ը. Մ.ի տեղւոյս Մասնաճիւղը, իր իսկ սեփական միջոցներով, տարիէ մը աւելի է որ, ունեցաւ իր հաւաքաժայր-մարզարանը: Մասնաճիւղս ունի փայլուն գործունէութիւն մը:

\* \* \*

Օգոստոս 27—31, տեղւոյս սկաուտական կազմը, այցելութիւն մը տուաւ Ֆիլիպէի Մասնաճիւղին եւ այդտեղի սկաուտներուն հետ կազմակերպեց չորսօրեայ բանակում մը, որ մեծ խանդավառութիւն յառաջ բերաւ:

\* \* \*

Սեպտեմբրի վերջին կիսուն, մեր հաւաքաժայրին մէջ, տեղի ունեցաւ սկաուտական ներքին ցուցահանդէս մը, ուր գնահատուեցաւ՝ խմբակներու մէջէն «Զի» խմբակը եւ անհատական տեսակէտով՝ գայլիկ-առաջնորդ Սարգիս Գանիլէեան:

Պուրկազ

ԳՐԻԳՈՐԻԿ

(Սկաուտ-առաջնորդ)



Պուրկազի (Պուլկարիա) Սկաուտները





# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ

## ՎԱՐՉԱՏՈՒՆԷՆ

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

#### ՆՈՐ ԸՆԾԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

##### ԳԻՏՆԱԼ

1. — Սկառուտին պատուոյ խօսքը:
2. — Սկառուտական դաւանանքը:
3. — Վեց կապեր:
4. — Վեց հետախուզական նշաններ:
5. — Սկառուտին բարեւը:
6. — Աստիճաններ եւ տարագ:
7. — Մարզական հրամաններ (սուլիչով, բերանացի):
8. — Սկառուտական շարքեր:
9. — Նշանաբանը:
10. — Պահակութիւն:
11. — Գաւազանի գործածութիւն:
12. — Նախնական ծանօթութիւն սկառուտական արշաւներու մասին:

Նոր ընծան պարտի երկու ամիս կանոնաւոր դասախօսութեանց հետեւիլ եւ քննութիւն անցնելէ յետոյ միայն կրնայ սկառուտական տարագ կրել:

#### Բ. ԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՀՍՄԱՐ

1. — Նուազագոյն երեք ամիս նորընծայ ըլլալ:
2. — Պատուոյ խոստումին պատրաստուած ըլլալ:
3. — Բաց օգին մէջ երկու լուցկիով կրակ վառել:
4. — Օճախ պատրաստել:
5. — Ուրէ կերակուր մը եփել:
6. — Պարզ վրան մը կազմել:
7. — Սանդուխ շինել, պատէ վեր մագրլցիլ գաւազանով կամ կապով ընկերներու օգնութեամբ: Սանդուխ՝ ձեռնակապ եւ անոճ կոպերը ու պատուհանէ մը կամ պատէ մը իջնելու ձեւերը գիտնալ:

8. — 15 վայրկեանէն 2 քիլոմետր ճամբայ կտրել սկառուտական գնացքով եւ պարզ քայլին չափը գիտնալ:
9. — «ՔԻՄ»ի խաղը գիտնալ եւ ծագումը բացատրել եւ հետք ճանչնալ:
10. — Նախնական դարման՝ վիրակապում աչքի, գլուխի, ականջի, կզակի, վիզի, ուսոսկրի, թեւի, սրունքի, նախաքաղուկի ոսկրաբեկումները կարենալ կապել, պատգարակ շինել եւ հիւանդ փոխադրել: Արիւնահոսութիւն մը դադարեցնել:
11. — Կողմնաճանաչութիւն՝ կողմնացոյցով, ժամացոյցով, արեւով եւ գիշերը լուսինով ու հիւսիսային աստղով:
12. — Սէմաֆորի կամ մոռսի Ա. Բ. ը գիտնալ եւ փոքր բառեր գրել:
13. — Մարզական հրամանները գիտնալ, բերնով, սուլիչով եւ ձեռքով:

#### Ա. ԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՀՍՄԱՐ

1. — Նուազագոյն երեք ամիս Բ. կարգի սկառուտ ըլլալ:
2. — 50 մէթր լողալ, արգելքի պարագային հետեւեալ մասնագիտութիւններէն մին ունենալ.  
Կարմիր խաչ, Գիւլամիգ, Գրօշախօս, Հետախոյզ, Հըշէջ:
3. — Մէկ վայրկեանի մէջ գրել եւ կարգալ մոռսի 15 գիր կամ սէմաֆորի 20 գիր:
4. — Ոտքով 10 քիլոմէթր ճամբորդութիւն մը կատարել, առանձին կամ մէկերկու ընկերներով (կամ թիափարել), վերադարձին կարճ տեղեկագիր մը տալ: Ձի եւ հեծելանիւ եղած պարագային 15 քիլոմէթր երթալ: Շօգեկառք արտօնուած չէ:
5. — Սպայակոյտի բարաէս մը կարգալ եւ յատակագիծ կարենալ պատրաստել:
6. — Բանակումի կամ հետախուզութեան փորձառութիւն ունենալ:
7. — Գնահատում՝ հեռաւորութեան, ծանրութեան, քանակութեան եւ բարձրութեան 25 առ հարիւր սխալով:
8. — Նորընծայ մը պատշաստել եւ ներկայացնել:



- 9. — Գլխաւոր համաստեղութեանց երեք հատը ճանչնալ:
- 10. — 10 բոյսի եւ 10 կենդանիի մասին ծանօթութիւն ունենալ կամ ծառ մը տնկել:
- 11. — Ձեռական աշխատութիւն մը ներկայացնել իր ձեռքով պատրաստուած:
- 12. — 10 վայրկեանէն Էրկու քիլովէթը ձամբայ կտրել սկաուսական գընացքով:
- 13. — Արկածի պահուն կարենալ պաղարիւն գործել, հրդեհի, ելեքարական ցնցումի, նուազումի, շնչահեղձութեան արկածներ եւ վիրաւոր դարմանել:

**ՍԿՍՈՒՏԱԿԱՆ ՅՄՆՁՆԱԽՈՒՄԲ**

**ԾԱՂԿԵՊՍԱԿ**

Նոյեմբեր 11ին, Ջինապաղարի տօնին առթիւ, Փարիզի մեր սկաուսներէն խումբ մը, գեղեցիկ ծաղկեպսակ մը դրին Անճաւօր Ջինուրի գերեզմանին վրայ, ընկերակցութեամբ Հայ Կամաւորներու Միութեան:

Մեր սկաուսներուն այս յարգանքի արտայայտութիւնը շատ լաւ սպաւորուքիւն բնորոշ հոն հաւատուած ժողովուրդին վրայ:



**ՍԿԱՈՒՏՈՒՇԻՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

Սկաուսական Յանձնախումբի աղջիկ սկաուսներու Ա. ցումարումը տեղի ունեցաւ 12 հոկտ.ին, ի ներկայութեան Գոյումպի, Անկիլէնի եւ Ռոնի Սու Պուաի մասնակիւղի ներկայացուցիչներու, եւ օրհ. Ըննապապեան տոյրերու՝ որոնք 6 տարեկ ի վեր Ֆրանսական խումբի մը կ'ընկերակցէին:

Կազմուեցաւ յանձնախումբ մը հետեւեւեպներէ:

- Օրիորդներ՝
- Տիրուհի Ըննապապեան՝ Ասենապետուհի
- Անժէլ Ըննապապեան՝ Ասենապետուհի
- Սիբարփի Քերիմեան՝ Գանձապետուհի
- Թագուրեան՝ խորհրդական
- Տիրուհի Քեօլեան:

Յանձնախումբին առաջին գործը եղաւ կազմակերպել Փարիզի օրջաններու մէջ աղջիկներու սկաուսական խումբեր:

Հոկտեմբեր 13ի կիրակին Ռոնի Սու Պուաի մէջ կազմուեցաւ օրիորդներու խումբ մը, նոյն օրը ներկայ էին Գոյումպի սկաուսուհիները:

Իսկ հոկտ. 20ին Անկիլէնի մէջ եւս կազմուեցաւ ուրիշ խումբ մը ուր, արձանագրուեցան 15ի մօտ օրիորդներ:

Ա. Հ.

**ՀԱՆԴԵՍՆԵՐ**

**ՆՈՅՆԵՄԲԵՐ 30ԻՆ ԱՆԿԻԷՆԻ մասնաւճիւղը կը սարքէ իր տարեկան երեկոյթ-պարահանդէսը, ճօխ յայտագրով: ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՕՏԱՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐ:**

**\* \* \* 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ շաբաթ գիշեր ժամը 9ին, տեղի կունենայ Պուա-Գոլումպի մասնաւճիւղին երեկոյթ-պարահանդէսը, Սալ Միւնիւսիբալիթէի մէջ, ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՍԿՍՈՒՏՆԵՐ եւ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐ Պու-Գոլումպի եւ շրջանի հայու թիւերը լաւ ժամանց մը պիտի վայելէ նոյն գիշեր:**

**ԿԱՐԵՒՈՐ**

Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի և Շրջանի Պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ շաբաթ 23 նոյեմ. 1929, ժամը 8.30ին, 61 Rue Mr. Le Prince, Ֆլորիա ճաշարանը: Բոլոր մասնաւճիւղերը պարտաւոր են ղրկել իրենց պատգամաւորները՝ մասնաւճիւղին օրինաւոր վաւերաթուղթերով: Նոյնպէս իրենց մասնաւճիւղին նիւթական և բարոյական տեղեկութիւնները:

Կարեւոր օրակարգ՝  
Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:

Հ. Մ. Ը. Մ. ՓԱՐԻԶԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ

**ԱՐԱՄ ԳԱՐԻՊԵԱՆ**

(Պէլվիլի նախկին գայլիկ)

Մեռած 29 Հոկտ. 1929ին 14 տարեկան:

Յուզարկաւորութիւնը տեղի ունեցած է 3 Նոյ. 1929ին. Պէլվիլի սկաուսական խումբը ընկերակցած է մինչեւ Բանթէնի գերեզմանատունը: Մեր ցաւակցութիւնը իր զժբախտ ծնողքին:



# ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԷ

## ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

29 ՍԵՊՏ. 1929 ԿԻՐԱԿԻ, ՓԱՐԻՋԻ ՓՈՐԹ-ՏՈՐԷԻ ՄԱՐՋԱՐԱՆԻՆ ՄԷՋ


Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի Շրջանային Վարչութեան կողմէ Միութեան տասնամեակին առիթը կազմակերպուած նաւասարդեան մրցումները տեղի ունեցան 29 սեպտեմբեր կիրակի կէս օրէ վերջ, Փորթ-Տորէի մարզարանին մէջ:

Երկու հազարի մօտ բազմութիւն մը տեղ բռնած էր մարզարանին մէջ որ, մինչեւ մրցումներուն վերջանալը մնաց հետաքրքիր:

Հանդէսին կը նախագահէր Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ Թորգոմ Արքեպիսկոպոս, իսկ օրուան թագուհին էր Տիկ. Ա. Համբարձումեան:

Հոն էին ազգային բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչները, (Բարեգործական Միութիւն, Կուսակցութիւններ, Դպրոցատէր Տիկնանց և անխտիր տեղական ամբողջ հայ մամուլը): Մէկ բառով այն օր ամբողջ հայութիւնն էր որ եկած էր քաջալերելու և ոգևորուելու համազգային տօնով մը: Մուրառնաֆայելեան գոլէժի Մխիթարեան հայրերը ամբողջութեամբ ներկայ էին:

Հանդէսը սկսաւ նուագախումբի «Յառաջ նահատակ» քայլերքով առաջնորդուած տղանցքով, որ շատ տպաւորիչ եղաւ, և մեզ յի-





չեցուց Պոլսոյ Ողիմպիականները: Մտտ երեք հարիւր հոգի, սկառւաներ, Գպրոցասէրի մարզկուհիներ, մարզիկներ և ֆութպոլի խումբեր Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի, չըջանի և գաւառի մասնաճիւղերէն, տողանցք կատարեցին և խլեցին խանդավառ ծափեր:

Սանդազառու թիւնը մնաց մինչև հանդէսին վերջը:

### ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ

#### ԱՂԶԿԱՆՑ

60 մէր վագֆ.— Ա. Ասատուրեան, Պ. Գալուստեան, Թ. Գասպարեան՝ 8 երկվ. 3.5:

(նախորդ մրցանիչը՝ 9 1,5 կտարած):

500 մէր վագֆ.— Ա. Յովհաննէսեան, Վ. Դաւիթեան, Վ. Սէֆէրեան, 1 վ. 51 երկ. (1,34 4.5.):

200 մէր վագֆ.— Ա. Ասատուրեան, Պ. Գալուստեան, Ա. Նայլեան, 33 երկվ.:

#### ԱՅՐԵՐՈՒ

100 մէր վագֆ.— Ս. Պէղազեան, Ալէքսանեան, Կ. Նալպանտեան, 12. 1,5 երկվ. (11.2,5):

200 մէր.— Յ. Մամիկոնեան, Ալիքսանեան, Պօղոսեան (Մարտէյլ) 24 երկվ. (նախորդ ազգ. մրցանիչը՝ 24.1,5 կտարած):

(\*) Փակագծի մէջիները հայկ. մրցանիչներն են:

400 մէր.— Եղիաեան, Պօղոսեան (Մարտէյլ) Գ. Սէտէֆեան, 58 երկվ. 1.5 (54.2,5):

800 մէր.— Յ. Մամիկոնեան, Ժ. Ստեփանեան, Փափազեան. 2 վ. 12 1,5 երկվ. (2 վ. 11,1.5) Փարիզի մրցանիչը 2 վ. 17 3,5 կտարած:

1500 մէր.— Վ. Քէչէճեան (Մարտէյլ), Մ. Ղազարեան, Արսէնեան, 4 վ. 48 2.5 երկվ. (4 վ. 35 երկ.):

3000 մէր.— Մ. Ղազարեան, Ս. Սերոբեան, Տ. Վարդանեան, 11 վ. 2 1.5 երկ. (10 վ. 2. 2,5 երկ.):

4x100 գրօսաբաւ.— Ռօնիի Մ.ճիւղ, Պուս Գոլոմպի Մ.ճիւղ, Իթալիի Մ.ճիւղ, 50,2.5 երկվ. (48,3.5 երկ.):

110 մէր ցանկաբաւ.— Պ. Չաքրճեան, Ա. Լիքսանեան, Ս. Մէղպուրեան, 20 երկ. (18,2.5):

Սկաւառակ.— Ա. Արէլեան, Ա. Ոսկերիչեան, Ս. Վէլէտեան. 30 մէթր 65 ս. (35 մ. 99 ս.):

Նիզակ.— Պ. Չաքրճեան, Ս. Վէլէտեան, Կ. Շահինեան, 37 մէթր 70 ս. (50 մէթր 03 ս.):

Բարձրութիւն.— Վազգէն Միսքճեան (Կրընուպլլ) Ա. Ասատուրեան, Եղիաեան 1 մ. 56 ս. (1.70):

Երկար.— Ա. Արէլեան, Մեղպուրեան, Ն. Սարգիսեան, 11 մէթր 02 ս. (12 մ. 80 ս.):





Երկայնուրիւն. — Յ. Մամիկոնեան, Ժ. Սահ-  
փանեան, Ալիքսանեան, 6 մէթր 25 (6 մ. 55 ս.)  
Փարիզի նախօրգ մրցանիշը՝ 6 մ. 13 ս. կոտ-  
րած:

Չող. — Յ. Մամիկոնեան, Հ. Գազանճեան,  
Ա. Ասատուրեան, 3 մէթր 31 ս. (3 մ. 32 ս.):

Մրցումներէն դուրս, Դպրոցասէրի սանու-  
հիները, իրենց ուսուցիչ Մ. Մալումեանի  
առաջնորդութեամբ կատարեցին չափական  
մարզանքներ, որոնք խիստ գոհացուցիչ և ու-  
գեւորիչ էին և բոլորին գնահատութեան ար-  
ժանացան:

Ներկաներու փափաքին վրայ, տողանցքը  
կրկնուեցաւ խլացուցիչ ծափերու մէջ և հան-  
դէսը վերջացաւ ժամանակին:

Հանդէսէն վերջ, օրուան թագուհին Տիկին  
Ա. Համբարձումեան և պատուոյ օրիորդներ  
Է. Իսրայէլեան և Ա. Փափազեան, կա-  
տարեցին մրցանակաբաշխութիւնը. յաղթա-  
կանները ստացան արձաններ, գրիչներ, փող-  
կապներ և այլն. զանազան մարզասէրներու  
կողմէ նուիրուած:

Գնահատենք Փարիզի Երջ. Վարչութիւնը,  
Մարզական Յանձնախումբը, Կարգադիր Մար-  
մինը և մարզական մասնագէտները որոնք լաւ  
կերպով կրցան կազմակերպել ու գլուխ հանել  
սոյն Մարզաստանը, Փարիզի պէս գծուարահած  
և ընդարձակ միջավայրի մը մէջ:

\* \* \* Ներկաներէն շատեր չտեսան և թեր-  
թերէն միայն իմացան զէպք մը՝ որ ցոյց կու-  
տայ թէ մարմնակրթանքը որչափ համակրանք  
չահած է Փարիզի մէջ: Արդարև յայտագրէն  
դուրս տեղի ունեցաւ 50 մէթրնոց վազքի  
մրցում մը որ կ'արժէ յիշատակել: Տիրող ընդհ-  
խանդավարութենէն տարուելով ներկաներէն  
Պ. Պ. Ա. Համբարձումեան, Ա. Կէվրէկ, Կ. Փա-  
փազեան և Հ. Ճէվահիրճեան դաշտ իջնելով  
չարուեցան մէկ գծի վրայ, ինչպէս երիտասարդ  
մարզիկներ և տրուած նշանին վրայ ճամբայ  
ելան:

Մրցումը հետեւեալ արդիւնքը տուաւ:  
Ա. — Հ. Ճէվահիրճեան, Բ. — Ա. Համբար-  
ձումեան (20 սանթիմէթր ետեւ) Գ. — Կ. Փա-  
փազեան:

\* \* \*

Կրքնօպլէն յաճախ 'ըր ծանուցուէր հայ  
մարզիկի մը ունեցած յաջողութիւնը բարձր  
ցատկելու մրցումներու մէջ, առանց յիշատա-  
կելու ամէնէն կարեւորը՝ այսինքն չափանիշը:

Սոյն մարզիկը՝ Վազգէն Միսքճեան, շահե-  
ցաւ բարձր ցատկելու մրցումը 1,56ով. իրեն  
հարցուցինք թէ ընդհանրապէս քանի՞ կր ցատ-  
կէր — 1,40—1,45 ըսաւ. պարզ արդիւնք  
մը, սակայն քաջայերելու համար կ'արժէ ար-  
ձանագրել:

\* \* \* Ինչ սքանչելի մարզիկ սա Յ. Մամիկոն-  
եանը. շատ չկան արագավազներ որոնք իրեն  
պէս 100, 200 և 400 մէթրի մրցանիշերը կոտ-  
րելէ վերջ պատրաստուին 800 մէթրի վրայ և  
յաջողին — արդարև իր 800 մէթրի արդիւնքը  
շատ կը մօտենայ մեր հին մրցանիշին. մօտ  
տասը տարիէ այդքան լաւ արդիւնք մը չէր  
արձանագրուած: Նոյնը կարելի է ըսել նաև իր  
երկայնութիւն ցատկելու արդիւնքին համար:  
Հապա ձողով ցատկելու իր մրցանիշը, մէկը  
միւսէն փայլուն:

Իրմէ կ'սպասենք (նոյնիսկ եթէ ի գործ  
դնէ իր ծնողաց քով, Պուլկարիա, վերադառնա-  
լու իր մտադրութիւնը) յառաջիկայ գարնան  
մեզ տալ ալ աւելի փայլուն յաջողութիւններ  
ծափահարելու առիթը:

\* \* \* Մեծ տպաւորութիւն ձգեցին Դպրո-  
ցասէրի սանուհիները, իրենց համաչափ մար-  
զանքներով խանդավառութիւն ստեղծելով ներ-  
կաներուն մէջ. յուսանք թէ պիտի գտնուին  
օրիորդներ որոնք պիտի ուզեն հետեւիլ իրենց  
սանուհի քոյրերուն: Ինչ գնահատելի գործ. հայ  
առողջ մայրեր է որ կը պատրաստուին Դպրո-  
ցասէրի մէջ:

\* \* \* Հապա գայլիկները, հապա սկաուտները,  
որոնցմէ 50ը զգեստաւորուած էին շնորհիւ Գա-



րան հղրայրներու նուիրատութեան. ինչ սքանչելի տեսարան մը կը պարզէր անոնց տուրան ցքը և բանակումը դաշտին վրայ:

\* \* \* Հակառակ ծանր հիւանդութենէ մը պաքինելուն, մեր հին ախոյեանը՝ Ա. Աբէլեան շատ բան չ'էր կորսնցուցած իր հուժկու մկաններէն. նոյնպէս իր տեսակ մը մեխամաղձութեամբ պատուած համեստութիւնը մնացած է այն՝ ինչ որ էր Պոլլա. այդ համեստութիւնը կարելի է իբր օրինակ ցոյց տալ մեր նորահաս մարզիկներէն ոմանց:

\* \* \* Եթէ մեր Թօրինոյի փայլուն մարզիկը՝ Յ. Թաշճեան եկած ըլլար (ինչ որ առիթ պիտի տար մեզ արձանագրելու շատ աւելի բարձր արդիւնքներ նիզակի կամ 110 մէթր արգելարշաւի մէջ) մարզական տեսակէտով կարելի պիտի ըլլար ֆրանսահայ այս նաւասարդեան Մրցումները զատել ամէնէն փայլուններու կարգին:

\* \* \* Ժան Վէրմէօլէն, ֆրանսացի անուանի

նախկին ախոյեանը, ընտանի դէմք մը դարձած է մեզ համար. 1923 էն ի վեր անընդհատ ներկայ կը գտնուի հայկ. մրցումներուն, իբր գատաւոր:

Իրմէ խնդրած ենք յօդուած մը՝ ուղղուած մեր մարզիկներուն, զոր խոստացաւ տալ:

\* \* \* Այս տարի մեր մէջ ունեցանք Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրներէն Պ. Գրիգոր Յակօբեանը որ պահած է իր այն կորովը և հաւատքը որ ունէր առաջ Պոլսոյ մէջ: Դաշտին վրայ իր երեւումը մեծ ոգևորութիւն առաջ բերաւ բոլորին մէջ:

ԾԱՆՕԹ... Սովորուածին էր եղած գործածել «Ողիմպիական Մրցումներ» բացատրութիւնը, սակայն այս տարի, ՆԱԻԱՍԱՐԴ-ԵԱՆ կոչուեցան անոնք, վերլիչելու համար մեր հայրենի տներէն ամէնէն նուիրականներէն մին. Յէլե բոլորովին տարբեր էին հայոց «Նաւասարդեան Խաղեր»ը, ո՞նոնք մարզական մրցումներ չէին երբէք այլ հանդիսութիւններ: ԵՅԼ պէտք է բուն նշանակութիւնը արդարացնել մեր տարեկան այս տօներուն, պէտք է «Տարեկան Մարզահանդէս» կոչել զանոնք:

Z. U.



Ահա եւ Հ. Մ. Ը. Մ. ի մտաւոյց հիմնադիրներէն ՃԻՉՄԷՆՃԵԱՆ, ՀԱՅԿր պատմեօին վրոյ. ո՞ւր է, ի՞նչ կ'ընէ... մանրամասնութիւններ յաջորդով



## Թ Է Ն Ի Ս

### Վ. ՇԻՐԻՆՆԱՆ

Թէնիսի պոլսոյ հայ ախոյեանը միշտ կը պահէ Թուրքիոյ ախոյեանի տիտղոսը զոր չորս տարիէ ի վեր յաջորդաբար կը շահի:

Շնորհիւ իր անվիճելի կարողութեան, Շիրինեան կրցած է յաղթել յայտնի եւ փորձառու խաղացողներու, ինչպէս են Իգմիրի ժիւռեղբայրները եւ ուրիշներ: Միայն այստարուան ընթացքին հինգ բաժակ ստացած է, շահելով Միւլիէթի եւ Թօքաթլեանյականդուկի զոյգ, եւ աւանտին այրերու ախոյեանի տիտղոսը:


Վերջին չորս տարուան ընթացքին, Շիրինեան շահած է արծաթէ 16 բաժակ եւ բազմաթիւ մէտայլներ: Բաժակներէն մէկը նուիրուած է ամերիկեան դեսպան Պ. Կրիուի կողմէ որ Թէնիսի ջերմ սիրահար մըն է:

\* \* 27 Հոկտ.—Օր. Իտա Ազամոֆ, Հայ ծանօթ ախոյեանուհին շահեցաւ Շանթիլիի մրցահանդէսին կանանց մրցումներուն առաջնութիւնը:




### ՀՐԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Հ. Մ. Բ. Մ. ի Խասգիւղի Մասնաճիւղին անդամ, այս երիտասարդը անցեալ Մայիս 19ին Մառն գետին մէջ շրջուող նաւակէ մը ջուրը ինկած չորս հոգի ազատեց (այր եւ կին մը եւ իրենց երկու տղաքը) իր զգեստներով գետը նետուելով անմիջապէս Ֆրանս. բոլոր Թերթերը իր մասին գովեստով խօսեցան եւ քարնէկի Մարդասիրական Հիմնարկութեան կողմէ իրեն նուիրուեցաւ մեծ շքանշանով՝ 1000 ֆրանքի դրամական նուէր մը: Կ'ըսուի թէ ներքին գործերու նախարարութիւնն ալ Ազատարարներու շքանշանով պիտի վարձատրէ զինք:







**ՖՈՒԹՊՈՒԼԻ ՕՐԷՆՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ  
ԿԱՐԵՒՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ**

1929 — 30 եղանակին նախօրհակին Ինքերեկերնրլ — Պօրսը որ կը գտնուի Անգլիոյ մէջ եւ որուն պաշտօնն է ֆութպօլի օրէնքները ըլլայ պահպանել, ըլլայ բարեփոխել, Սկովտիացուց առաջարկով որոշեց որ յետ այսու բեհալքիի մը ընթացքին բերդապահ մը չպիտի կրնայ կօլի գծէն ոչ առաջ, ոչ ետ կենալ եւ ոչ ալ տեղէն շարժիլ, մինչեւ որ զընդակին հարուածը արուի:

Այս նոր օրէնքը արդէն իսկ սկսած է գործադրուիլ ամէն կողմ:

29 Սեպտ. — Քան քաղաքին մէջ (Գալփատու) Տորք հայկ. խումբը կը յաղթէ տեղւոյն խումբին 2ի դէմ 3 կօլով:



ՖՈՒՍ ԱՐԱՔԱ

Անկիւնի Հ. Մ. Ը. Մ.ի ֆութպօլի խումբը

6. Հոկտ. — Անժէ քաղաքին մէջ հայկ. Տորք խումբը չարաչար կը պարտուի տեղւոյն ժան Պուէն խումբէն դէրօյի դէմ 8 կօլով:

27 Հոկտ. — Արաս քաղաքին մէջ տեղւոյն «Ռասինկ Գլիւպ»ը կը յաղթէ հայկ. Տորք խումբին 0ի դէմ 3 կօլով:

\* \* Անգլիոյ ֆութպօլի ներկայացուցչական խումբը ամէն տարի Բրիտանական կղզիէն դուրս երկու մրցում կը կատարէր, մին Ֆրանսայի եւ երկրորդն ալ Պէլճիքայի դէմ: Անցեալ տարի քանի մը ծանօթ անգլիական մեծ խումբեր պարտուած ըլլալով Եւրոպայի մէջ, անգլ. Ֆեքերաիօնը որոշեց այս տարի ջնջել սոյն երկու մրցումները եւ ի փոխարէն մրցիլ Գերմանիոյ եւ Աւստրիոյ դէմ (ֆութպօլի մէջ առաջին կարգի վրայ երեւցող ազգերէն երկուքը), այսպէսով վերահաստատելու համար Անգլիոյ ունեցած անպարտելիութեան համբաւը ֆութպօլի մէջ: Այս որոշումը դժգոհութիւն պատճառեց Ֆրանսայի մէջ:

\* \* ֆութպօլի ախոյեանական մրցումները կը շարունակուին ամէն կողմ:

Անգլիոյ մէջ, բրօքսիօնէյներու լիկը իր տասներորդ օրուան հասաւ. առաջնութիւնը առայժմ կը գրաւէ Լիտա Ըյնաթա խումբը. անցեալ տարուան ախոյեան Շէֆիլտ Վինտստէյ երկրորդ է, Մանչէսթըր Սիթի, Արսէնալ եւ Տէրպի Քընթի խումբերուն հետ միասին:

Փարիզի ախոյեանութեան մրցումներուն մէջ առաջնութիւնը կը գրաւէ (միշտ առժամանակեայ կերպով անշուշտ) Ռէտ Սթար խումբը:


Հարաւային Ֆրանսայի մէջ Սէթ եւ Մարսէյլ առաջին են, իսկ Հիւս. Ֆրանսայի մէջ Ռուպէի խումբը:

Իտալիոյ անցեալ տարուան ախոյեան Պոլնիա եւ Թօրինօ որոնք այս ամառ Հարաւ. Ամերիկայի լատին Հանրապետութիւններուն մէջ համարողութիւն մը կատարեցին, ախոյեանութեան առաջին մրցումներուն մէջ պարտուած են:

\* \* Անցեալ ամիս տեղի ունեցած ֆութպօլի ազգ խումբերու մրցումներէն յիշենք նաեւ հետեւեալները:



Անգլիա	կը յաղթէ	Իռլանտայի	(3—0)
Տանըմարքա	»	Ֆինլանդացի	(8—0)
Գերմանիա	»	»	(4—0)
Աւստրիա	»	Չեխոսլովակիոյ	(3—1)
Սկովտիա	»	Իրլանտայի	(4—2)
Զեխասլովաքիա»		Եռկոսլաւիոյ	(4—3)
Ռուսմանիա	»	Եռկոսլաւիոյ	



ՕՏԱՐ

ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱԹԻԷԹԻՉՄ

\* \* \* Հսկատ. 27ին տեղի ունեցած «Ֆրանսայի Բաժակ»ի ֆուտբոլի մրցումներուն մէջ ֆարիզի Չեխոսլովակիան խումբը հակառակ ամէն ակնկալութեանց պարտուեցաւ զրեթէ անձանօթ խումբէ՝ Ի. Լ. Մուայէօվրը, Լօրէնէն:

\* \* \* 1930 Յունիսին Հարաւ. Ամերիկեան փոքրիկ հանրապետութիւններէն Ուրուկուա պիտի տօնէ իր անկախութեան հարիւրամակար. այս առթիւ 1924ի եւ 1928ի ողիմպիականներու ֆուտբոլի յաղթականները Միջագ. Ֆեքտրաիօնէն խնդրած էին իրենց յանձնել աշխարհի ախոյեանութեան առաջին մրցանանդէսին կազմակերպումը: Հակառակ անոր որ Ուրուկուա խոստացած է իրեն այցելելիք ազգ. խումբերուն բոլոր ծախքերը հոգալ, բազմաթիւ եւրոպական տէրութիւններու ազգ. խումբերը տեղեկացուցած են թէ չպիտի կրնան մասնակցիլ սոյն մրցանանդէսին: Շատերուն համար անկարելի կը թուի քանի մը տասնեակ խաղացողներ ամիսներով երկրէն հեռու պահել, առանց վնասելու իրենց կազմակերպած ախոյեանութեան մրցումներուն, կամ խաղացողներու անհատական զբաղումներուն:



6 Հոկտ.— Նորվեգիացի Շարլ Հօֆ ծանօթ մարզիկը Տրօնթայմի մէջ կոտրած է անոսլ ցաւկելու աշխարհի մրցանիչը 4 մեթր 28 սանթիմով, նախորդն էր 4 մեթր 26 սանթիմ, որ կը պատկանէր Քէրի ամերիկացիին:

17 Հոկտ.— Գերման արլեր Էլտրաքէր՝ Սէուլ (Ճարմն) քաղաքին մէջ 100 մեթրը վազած է 10,3,10րդ երկվայրկեանէն ինչ որ Բատօքի պատկանող աշխարհի մրցանիչը (10.4,10) կը կոտրէ, եթէ վաւերացուի:

\* \* \* Նոյն օրը Ճարմնուհի մը, Քիմա Իթօմի, կոտրած է աշխարհի 100 մեթր վազքի կանանց մրցանիչը 12 1)5 երկվ.ով:

Նոյն այդ մարզիկուհին հոկտ. 24ին կոտրած է նոյնպէս աշխարհի երկայնութիւն ցաւկելու կանանց մրցանիչը 6 մեթր 17 ս.ով:

\* \* \* Ֆաշիստներու Հռովմ մուտքին տարեգարծին օրը, Հոկտ 27, Իտալիոյ մէջ սքօլի 400 նոր դաշտերու բացումը կատարուած է:

ԿԻՄՓԱՄԱՐՏ

29 Սեպտ.— Ֆրանսա-Ֆինլանտա արլերիկովի մրցումին — որ վերջացաւ երկրորդին պարտութեամբ 69ի դէմ 70 կէտով — յանուն Ֆինլանտայի մասնակցող մարզիկներուն մէջ կային երեք եղբայրներ ժարվինէն անունով, որոնցմէ մին մասնակցեցաւ 400 մեթր վազքին, երկրորդը երկաթ նետելու եւ երրորդն ալ նիզակի:

Ասիկա ինքնին հիանալի է: Բայց ինչ որ աւելին է սա է թէ, այս երեք եղբայրներուն հայրը ինքն ալ քաջ մարզիկ մըն էր, որ 1906ին Աթէնքի մէջ տեղի ունեցող Միջ. Ողիմպիականին մէջ իր հայրենիքը կը ներկայացնէ:

Մեր մէջ կայ նմանը....



27 Սեպտ. — Սկովաիացի կոփամարտիկ ծոնի Հիլ, որ Հոկտ. 12ին Լոնտոնի մէջ պիտի մրցէր Ամերիկացի Ֆրանքի ձէնարոյի հետ աշխարհի ախոյեան ախողոսին համար, մեռալցրտառութեան մը հետեւանքով: 24 տարեկան էր եւ իր մահը դրեթէ յանկարծակի եղած է: Այս դէպքին ամէնէն ցաւալի հանգամանքը սա է թէ 5 տարի առաջ երբ նոյն այդ ձէնարոն պիտի մրցէր Ֆիլիփեան ծանօթ ախոյեան Բանջօ Վէլայի հետ, այս վերջինը յանկարծակի մեռաւ մրցումէն երկու շաբաթ առաջ:

**ՕԴԱՆԱԻՈՐԴՈՒԹԻՒՆ**

Ֆրանսայի օգային նախարար Մ. Լօրան Էնաք որոշած էր դրամական նուէրներ բաժնել այն ֆրանսացի օգանաւորդներուն որոնք միջազգային մրցանիշեր կոտրելով պիտի բարձրացնէին ֆրանս. օգանաւորդութեան պատիւը: Բօսթ եւ Պէլոնթ օգանաւորդները անցեալ ամիս կոտրած ըլլալով աշխարհի օգանաւորդ հեռաւորութեան մրցանիշը իրենց Փարիզ-Մանչուրիա թռիչքով, պիտի ստանան 1 միլիոն ֆրանքի նուէր մը:

**ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ**

22 Սեպտ. — Ֆուժէր քաղաքին մէջ տեղւոյն Տրաբօ սը Ֆուժէր խումբը կը յաղթէ ՏՈՐՔ Հայկ. խումբին 3ի դեմ 4 կողով:

**ՊՈՒԼԿԱՐԻԱ (ՊՈՒՐԿԱԶ)**

Տեղւոյս Հ. Մ. Ը. Մ.ի մարզական բաժինը — որ նախկին «Մասիս» Միութիւնը կը կազմէր — իր մէջ կը համրէ 25 — 30 անդամներ եւ ֆութպոլի անջատ խումբեր: Այս վերջինը 7—8 ամսուան կեանք ունի: Կան նաև օժանդակ անդամներ:

\* \* Սեպտեմբեր 29 տեղի ունեցաւ Տարեկան Մարզական Մրցումներ, ուր զոհացուցիչ արդիւնքները ձեռք բերուեցան:

\* \* Հ. Մ. Ը. Մ.ի տեղւոյս ֆութպոլի խումբը, որ վերջերս պուլկարական մարզական դաշնակցութեան մէջ ընդունուեցաւ, այդ առթիւ, նոյն ընկերութեան կեդրոնին կարգադրութեամբ, Հոկտեմբեր 3ին, պաշտօ-

նական մրցում մը ունեցաւ Պուրկազի նահանգի ախոյեան Լէվսքի խումբին հետ: Մրցումը անցաւ հետաքրքրական եւ վերջացաւ մեր խումբին պարտութեամբ, ինչ որ անխուսափելի էր, քանի որ մեր առաջին մրցումն էր այդ:

\* \* Գարձեալ Հ. Մ. Ը. Մ.ը Հոկտեմբեր 20ին ունեցաւ իր երկրորդ մրցումը, տեղւոյս լաւագոյն խումբերէն «Զ. Զ. 29»ի հետ, որ կրկին մեր պարտութեամբ վերջացաւ:

Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ



Ֆոթօ ԱՐԱՔՍ  
Նաւասարդեան Մրցումներէն՝ մրցանակաբաշխումին

**ԼԻԿԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**

Ֆրանսահայ մարզական կեանքի մէջ, առաջին անգամ ըլլալով, Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի օրջանի մասնաճիւղերը, ամէն կիրակի Սրաս-Փերժիկի մէջ իրարու հետ կը կատարեն ախոյեանութեան մրցումներ՝ զեկավարութեամբ Մ. Մալումեանի:

Իրարու դեմ կը մրցին, Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերէն՝ Իրալի, Սարսէյ, Անկիլիէն, Պիեանֆուր, Կոլոմպ, Ալֆորվիլ, Ռոնի-Սու-Պուա, եւ Գարակոզեան-Հոմ: Յարգ վեց մրցումներ կատարած է իւրաքանչիւր խումբ, առաւելուքին կը մնայ առայժմ Սարսէյի եւ Իրալիի մօտ: Նոյեմբեր 31ին տեղի պիտի ունենան նոյն մարզարանի մէջ ՖԻՆԱԼ մրցումներ: